

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ին, կիրակի.—Կարմիր կիրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Մայիսի 13-ին, կիրակի.—Տօն Երեմայ Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա մեծ տոնի առթիվ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը:

*
* *

Մայիսի 24-ին, հինգշաբթի.— Համբարձումն Քրիստոսի: Յիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. Էջմիածին, յամի Տեառն 1441:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաքելյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Մայիսի 27-ին, կիրակի.— Երկրորդ Յարկազարդ: Ոգեկոչումն հոչակման Հայաստանի Հանրապետութեան 1918 թ.:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սուրբիաս աբդ. Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 10):

Հավարտ պատարագի կատարվեց գոհաբանական մաղթանք:

*
* *

Հունիսի 9-ին, կիրակի.— Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 10-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Ամերիկայի Արևելյան թեմից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց:

*
* *

Հունիսի 16-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների Հյուստոն քաղաքի հոգևոր հովիվ Տ. Ներսես ավ. քհն. Ճեպեճյանը:

*
* *

Հունիսի 17-ին, կիրակի.— Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: